ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԺԱՆՐԵՐ

ՆԱԻՐԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
բ.գ.թ., դոցենտ
Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան
ORCID ID 0000-0002-7914-7966
isnaira123456@gmail.com

DOI: 10.54503/1829-0116-2022.2-230

ՄԻՖ-ԱՐԽԱԻԿ ԷՊՈՍ-ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՊՈՍ[1]*

Բանալի բառեր – համեմատական էպոսագիտություն, արխաիկ էպոս, հերոսական էպոս, արխաիկ հերոս, մշակութային հերոս, համեմատական առասպելաբանություն, ընդհանրական մոտիվներ, հերոսի գերբնական ծագում, արխաիկ հերոսի տիպաբանություն

Էպոսը իր հիմքով համեմատաբար արխաիկ ժանր է։ Այն առաջանում, ծագում է մարդկության պատմության ու մշակույթի այն ժամանակաշրջանում, երբ մարդը սկսում է հասկանալ իր ֆիզիկական հնարավորությունները ու դրա շնորհիվ գիտակցել գերբնականից իր անկախացումը։ Իրենց բովանդակությամբ ու շոշափած թեմաներով էպոսները բաժանվում են երկու խմբի՝ արխաիկ ու հերոսական։ Սրանց միջև խիստ սահմանազատում, որպես այդպիսին, չկա։ Հերոսական կամ դասական համարվող շատ էպոսներում առկա են արխաիկ էպոսին բնորոշ տարրեր (օր. շումերաաքադական «Գիլգամեշը» վաղպետականության շրջանում ձևավորված էպոսի օրինակ է, բայց այն նաև արխայիկ էպոսի փայլուն նմուշ է)։ Էպոսի արմատները խորանում են մարդկության դիցաբանական ընկալումների և մտածողության նախնական ձևերի մեջ։ Գերբնականի թեմատիկայով աչքի ընկնող արխաիկ էպոսի հիմքում առասպելն է, միֆը։

1 Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 21T-6B038 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում։

* *Ընդունվել է տպագրության 19.12.2022 թ։*

NAIRA ISKANDARYAN
Russian-Armenian University, PhD, Associate Professor

MYTH-ARCHAIC EPIC-HEROIC EPIC

Key words – comparative epic studies, archaic epic, heroic epic, an archaic hero, an cultural hero, comparative mythology, universal motives, magical origin of the hero, typology of the archaic hero

The epic is a relatively archaic genre. It is so sensitive that is able to include certain historical facts or vague memories of historical events. With their content and themes, the epics are divided into 2 groups: archaic and heroic. There is no strict boundary between them as such. Many epics, considered to be heroic or classical, have elements typical of an archaic epic. For example, the Sumerian-Akkadian "Gilgamesh" is an illustration of an epic formed during the pre-eminence, yet a brilliant sample of an archaic epic. The main roots of the epic go deep into the mythological perceptions and primitive ways of thinking of mankind. The archaic epic with a supernatural theme is based on a myth. There have been various preliminary ideas about the creation of the world, the emergence of life, which mainly present it as a mystery or a secret. We relate to the mystery of the creation of the world through a myth, a universal story that is specific to almost all peoples. In a broad sense, a myth is a general, universal description of the creation of the universe, presented in a way that is understandable and perceptible to a person. The central hero of the archaic epic is the bearer and representative of the "alien" world, he is only an object of surprise and admiration and not at all of imitation. Both of the "mixed" type, that is, with the combination of archaic and heroic components ("Iliad", "Odyssey"), and heroic epics are formed at the stage of the development of society, when the ethnos, the people are already united "we", around the concept, which is opposed to "them".

НАИРА ИСКАНДАРЯН
Российско-Армянский университет, к.ф.н., доцент

МИФ – АРХАИЧЕСКИЙ ЭПОС – ГЕРОИЧЕСКИЙ ЭПОС

Ключевые слова – сравнительное эпосоведение, архаический эпос, героический эпос, архаический герой, культурный герой, сравнительная

мифология, общие мотивы, сверхъестественное происхождение героя, типология архаического героя

Эпос – относительно архаичный литературный жанр. Он настолько «чувствителен», что может содержать определенные исторические факты или далекие воспоминания об исторических событиях. По своему содержанию и тематике эпосы делятся на 2 группы: архаические и героические. Строгого разграничения между ними как такового нет. Многие эпосы, считающиеся героическими или классическими, имеют элементы, типичные для архаического эпоса. Так, шумеро-аккадский «Гильгамеш» является образцом классического эпоса, сформировавшегося в период раннегосударственных образований, но в то же время представляет собой блестящий образец архаического эпоса. В центре сюжета архаического эпоса находится схватка героя с каким-либо чудовищем, змеем или драконом, вокруг этого плетется сюжет, растет, обретает форму, включая новые детали. Архаический эпос берет начало от мифов, воспринимаемых как мифологические представления о человеке, и обогащается представлениями о мироустройстве человека, живущего в династическом обществе. Центральный герой архаического эпоса — носитель и представитель «чужого» мира, он лишь объект удивления и восхищения, а вовсе не подражание. Им можно восхищаться, даже поклоняться ему, но он еще не культурный герой, не идеал, которому стремятся подражать люди. Главный герой классического эпоса — человек, но он не простой человек, а лучший из людей, носитель человеческих добродетелей. Эпосы «смешанного» типа, то есть с сочетанием архаических и героических компонентов («Илиада», «Одиссея»), как и героические эпосы, формируются на этапе развития общества, когда этнос, народ уже объединился вокруг понятия «мы», которое противопоставляется понятию «они».

Մուտք

Էպոսը իր հիմքով համեմատաբար արխաիկ ժանր է: Այն առաջանում, ծագում է մարդկության պատմության ու մշակույթի այն ժամանակաշրջանում, երբ մարդը սկսում է հասկանալ իր ֆիզիկական հնարավորությունները ու դրա շնորհիվ գիտակցել գերբնականից իր անկախացումը: Նա այնքան «զգայուն» է, որ կարողանում է ներառել որոշակի պատմական իրողություններ կամ էլ անորոշ հիշողություններ պատմական դեպքերի վերաբերյալ: Թեև «էպոսի աշխարհը, ըստ էության, ենթակա չէ իրական-պատմա-

կան նույնականացման, այն կարող է սկիզբ առնել որևէ կոնկրետ պատմական ժամանակաշրջանից» (Путилов, 1988, с. 8)։

Ըստ ռուս բանագետ Նեկլյուդովի՝ էպոսը աշխարհում համաչափ տարածվածություն չունի։ Էպոս չի ստեղծվել Նոր աշխարհում՝ Ամերիկայում, իսկ Հին աշխարհում որոշ ժողովուրդներ կարողացել են դրսևորել էպիկական մտածողություն ու ստեղծել ազգաբնութագրիչ տարրերով հարուստ էպոսներ, ուրիշները՝ ոչ։ Այսպես, օրինակ, էթնիկ չինացիները չունեն էպոս, իսկ մոնղոլները ունեն։ Մինչ օրս դուրս չեն բերված կամ մատնանշված այն պայմանները և պահանջները, որոնց առկայության դեպքում **կարող է էպոս ձևավորվել, կամ էլ, դրանց բացակայության դեպքում, չձևավորվել**։ Նույնիսկ մեկ էթնիկական խմբի շրջանակում էլ էպոսը համաչափ տարածում չի գտնում, օրինակ, «Սասնա ծռերը» Սասունում, Մոկսում, Շատախում է լայնորեն տարածված եղել, իսկ Հայկական լեռնաշխարհի այլ տարածաշրջաններում հայտնի չի եղել կամ շատ քիչ է հայտնի եղել։

Իրենց բովանդակությամբ ու շոշափած թեմաներով էպոսները բաժանվում են երկու խմբի՝ արխաիկ ու հերոսական։ Սրանց միջև խիստ սահմանազատում, որպես այդպիսին, չկա։ Հերոսական կամ դասական համարվող շատ էպոսներում առկա են արխաիկ էպոսին բնորոշ տարրեր (օր.շումերաաքադական «Գիլգամեշը» վաղպետականության շրջանում ձևավորված էպոսի օրինակ է, բայց այն նաև արխայիկ էպոսի փայլուն նմուշ է)։

Էպոսի արմատները խորանում են մարդկության դիցաբանական ընկալումների և մտածողության նախնական ձևերի մեջ։ Գերբնականի թեմատիկայով աչքի ընկնող արխաիկ էպոսի հիմքում առասպելն է, միֆը։ Հանրահայտ ռուս բանագետ Մելետինսկին նշում է, որ «առասպելա-էպիկական դարաշրջանը, ինչպես անվանում են ժամանակակից գիտության մեջ արխաիկ էպոսի առաջացման ժամանակը, կարելի է հայտնաբերել յուրաքանչյուր ժողովրդի պատմության մեջ։ Այն սովորաբար համապատասխանում է արարչագործության միֆական ժամանակաշրջանին» (Мелетинский, 1980, сс. 665-666)։ Թեև հունարենից թարգմանաբար և՛ միֆը, և՛ էպոսը, և՛ լոգոսը նշանակությամբ կապվում են **բառի, խոսքի, հորինվածքի** հետ, այնուամենայնիվ միֆը իր սյուժեով մի յուրահատուկ կտավի է վերածվում՝ նախորդելով հնարավոր

պատմական իրադարձություններին: Այս առումով արխաիկ էպոսի մեջ առաջնայինը, առավել ընդգծված ու կարևորը առասպելական սխեմայի վերարտադրումն է, քան պատմական փաստերի ճշգրիտ ցուցադրումը (Бабурин, 1984, с 232): Իր «Քննադատության անատոմիան» աշխատության մեջ առասպելի ու էպոսի հետաքրքիր սահմանագիծ-բնորոշում է ներկայացնում կանադացի գրականագետ Նորտրոպ Ֆրայը: Նա այդ երկու ստեղծագործությունների դասակարգումը տարորոշում է «ոչ թե արժեքաբանական-բարոյական հիմքի վրա, այլ հերոսի գործելու կարողությանը համապատասխան»: Այսպես, եթե հերոսը գերազանցում է մարդկանց և շրջապատը *որակապես*, ապա նա հանդես է գալիս որպես աստված և նրա մասին զրույցները ներկայանում են առասպելի տեսքով: Եթե հերոսը գերազանցում է մարդկանց ու շրջապատին իր *նշանակալի աստիճանով*, գործողություններն ու արարքները հրաշագործ էլեմենտ են պարունակում, բայց նա պատկերվում է որպես մարդ, ապա դա վիպական ասքի տիպիկ հերոս է: Այս զրույցների հերոսը գործում է մի աշխարհում, որտեղ բնության սովորական օրենքները մասամբ կասեցված են, իսկ կախարդված զենքը, խոսող կենդանիները, սարսափելի վհուկները, հսկաները և հրաշագործ թալիսմանները ճշմարտության օրենքները չեն խախտում, հենց որ պատումի նորմերը ուժի մեջ են մտնում: Այս դեպքում գործ ունենք լեգենդի կամ հեքիաթի հետ: Եթե հերոսը *դիրքով, աստիճանով* գերազանցում է այլ մարդկանց, բայց կախված է երկրային գոյության պայմաններից, ապա ներկայանում է որպես առաջնորդ: Նա օժտված է ուժով, կրքով և խոսքի արտահայտչականությամբ, որը հասարակ մահկանացուներին հասու չէ, բայցևայնպես նրա արարքները ենթակա են մարդկանց քննադատությանը և ենթարկվում են բնության օրենքներին: Սա արդեն էպոսի և ողբերգության հերոսն է(Фрай, 1987, с. 232):

Միֆ

Ի տարբերություն էպոսի՝ միֆը սովորաբար լոկալ բնույթ ունի և կապվում է կոնկրետ տեղանքին, մինչդեռ էպոսի արծարծած բովանդակության ընդգրկունությունը տարածական է: Առավելապես կապված լինելով բնության վերաբերյալ մարդկանց նախնական պատկերացումներին՝ առասպելի հիմքում, ի սկզբանե, պատմա-

կան ժամանակները արտացոլված չեն, ինչը սակայն չի բացառում դրանց հետագա պատմականացումը: Ս. Հարությունյանը փաստում է, որ «հայոց գրեթե բոլոր հին առասպելները, որոնք մեզ են հասել գրավոր ավանդությամբ, առհասարակ ենթարկվել են խիստ պատմականացման ու վիպականացման: Դրանց մեջ նախկին լուսավոր աստվածներն ու դյուցազունները կա՛մ դարձել են հայոց նախնիներ ու թագավորներ (Հայկ, Արամ, Արա Գեղեցիկ, Տորք)» (Հարությունյան, 2010, էջ 144) կա՛մ, ըստ եվհեմերական[1] մոտեցման, հայոց թագավորները փոխարինել են հին աստվածներին, իսկ նրանց հակառակորդ աստվածությունները դարձել են հայոց թշնամի երկրների բռնակալ տիրակալներ (Բել, Շամիրամ, Աժդահակ և այլն):

Լայն առումով միֆը տիեզերքի ստեղծման համընդհանուր, ունիվերսալ նկարագրությունն է՝ ներկայացված մարդուն հասկանալի, ընկալելի եղանակով: Մոտավոր շրջաբաժանումը, որը օգնում է մեզ հասկանալի շրջանակի մեջ դիտարկել միֆի ժամանակագրությունը, բազմամյա հետազոտությունների արդյունքում արդեն կարելի է պատկերացնել որոշակի ուրվագծի մեջ: Այսպես, սկզբում գոյություն է ունեցել աբստրակտ մի իրականություն, որը պայմանականորեն կարող ենք անվանել **խավար կամ քաոս**: Հետո սկզբնավորվել է աներևակայելի արարածների ժամանակաշրջանը՝ սարսափազդու (тератоморф) հրեշների, դևերի, տիտանների տեսքով: Հետո առաջ են եկել մարդակերպ (антропоморф) աստվածները իրենց մասին հյուսված ավանդազրույցներում, որտեղ պատմվում էր, թե նրանք զուգավորվում էին մարդկանց հետ՝ կյանք պարգևելով գալիք հերոսներին: Այս հերոսները կիսաստվածներ էին, որոնց էլ հետագայում հետևում է հասարակ մարդկանց ժամանակը: «Թեպետև ավանդականության, հարակցումների ու հարակա այլափոխությունների պատճառով հաճախ դժվար է ժամանակագրորեն միմյանցից տարբերել ու սահմանազատել հին կրոնական ըմբռնումներն ու պատկերացումները, այնուհանդերձ դրանցում առկա են պատմամշակութային որոշակի դարաշր-

1 Եվհեմերոս, հույն փիլիսոփա (մ.թ.ա. IVդ.) Ըստ նրա առաջադրած տեսության՝ աստվածներն ու դիցաբանական կերպարները իրական անհատականությունների ֆանտաստիկ կերպարանափոխություններ են, իսկ առասպելները՝ պատմական իրադարձությունների խեղաթյուրված ներկայացում: Տես նաև Մ. Աբեղյան, Երկեր 8 հատորով, հատոր Ը, Երևան, 1985, էջ 99:

ջաններին բնորոշ իրողությունները» (Հարությունյան, 2001,էջ 6)։ Իհարկե, այս շրջաբաժանումը ընդամենը մոտավո՛ր պատկերացում է տալիս աշխարհաստեղծման միֆի մասին և պարզ է, որ այդ ժամանակաշրջանները այսպես հեշտությամբ տարանջատելի չեն միմյանցից։ Դա նման է մի հանքային ապարի, որից, ըստ ռուս բանագետ Դյակոնովի, դեռ պետք է կարողանանք տարանջատել մաքուր մետաղը (Дьяконов, 1990, с. 12)։ Երևակայենք մի հնագետի, որը պատմության վաղնջական շերտերն է ուսումնասիրում հին գրքերով կամ գիտական հրապարակումներով։ Հետո ինչ-որ պեղումների ժամանակ հանդիպում է հին քաղաքի հետքերի։ Ենթադրենք, թե այդ գիտնականը հայտնվում է հրդեհի պատճառով փլուզված ենթադրյալ մի ամրոցի տարածքում, որտեղ նա պիտի փնտրի, ուսումնասիրի, պարզի, թե այդ խառը կույտի մեջ ո՞րն է ամրոցի տանիքը, այսինքն՝ սկիզբը, որո՞նք են պատերը, ո՞րն է հատակը։ Ամեն ինչ այնքան է միախառնված ու դարերի ընթացքում մամլված, որ դրանք գրեթե անհնար է ստույգ տարբերելը։ Ճիշտ այս կերպ արխաիկ էպոս կամ առասպելներ քննողը ստիպված է հաշվի առնել, որ յուրաքանչյուր սյուժեում սեղմված կամ շերտավորված ձևով միահյուսված են տարբեր ժամանակաշրջաններ, դեպքեր, երբեմն նույնիսկ մեկ դրվագում կարելի է հայտնաբերել հազարամյակներով իրարից տարանջատ իրողությունների հետքեր։ Ժամանակակից քաղաքակրթության մեջ ապրող հետազոտողի համար, ըստ Դյակոնովի, բավականին դժվար խնդիր է փորձել վերականգնել նախնիների կենսակերպի բաղադրիչները ո՛չ միայն նկարագրորեն, այլև շոշափելի ճշգրտությամբ։ Օրինակ, Մինոտավրոսի ու լաբիրինթոսի մասին պատմող առասպելի մեջ ամեն ինչ միախառնված է և ստուգությամբ որոշել, թե պատումի որ հատվածն է սկզբնավորվել տիեզերաստեղծ (կոսմոգոնիկ) ժամանակներում, իսկ որը՝ վաղնջական, դժվար կլինի ասելը։ Այնտեղ առկա է և՛ գերբնական արարածների ժամանակը՝ հրեշակերպ Մինոտավրոսի տեսքով, և՛ մշակութային հերոսների ժամանակը (Դիդալը լաբիրիբթոս է կառուցում), ինչը վկայում է գիտության զարգացման, քաղաքակրթական առաքելության մասին։ Անհնար է ստույգ գծել այս միֆի ժամանակագրական շերտերը, դրանք սերտաճած-միահյուսված են իրար։

Աշխարհաստեղծման, կյանքի առաջացման շուրջ գոյություն են

ունեցել նախնական տարաբնույթ պատկերացումներ, որոնք հիմնականում ներկայացնում են դա որպես առեղծված կամ գաղտնիք: Մենք հարաբերվում ենք աշխարհաստեղծման գաղտնիքին միֆի՝ ունիվերսալ պատումի միջոցով, որը հատուկ է գրեթե բոլոր ժողովուրդներին: Սրվանձտյանցը համոզված է, որ «այսպիսի առասպելաց մէջէն ծագած են եւ ի նոյն մնացած ամէն հին ազգաց նախնականութիւնը»(Սրվանձտյանց, 1874, էջ 151):

Միֆը նաև ժամանակի մեջ գոյատևելու միջոց է, ուր արտացոլվում է իրականը, ճշմարիտը՝ համեմված հրաշապատումով: Դյակոնովը հավելում է, թե «առասպելը բանավոր մտածական մի յուրատեսակ հետք է ոչ միայն ա՛յն բանի, թե ի՞նչ է մտածել, ինչի՞ն է հավատացել, կամ ի՞նչ է զգացել հնադարյա մարդը, այլ նաև **ինչպե՞ս է** մտածել» (Дьяконов, с. 13): Տարածում գտած այն պատկերացումը, թե միֆը պարզապես հաճելի իլյուզիա է, գրաքննադատ Միրչա Էլիադեն իր աշխատության մեջ վերաձևակերպում է՝ ընդգծելով, թե արխաիկ հասարակարգերում առասպելը գրեթե միշտ նշանակել է «ճշմարիտ պատմություն» (Элиаде, 2010, с. 40): Միֆը զրուցաբանում է մի սակրալ պատմություն, որը տեղի է ունեցել բոլոր սկիզբների հիշարժան ժամանակներում: Ժամանակ հասկացության ընկալման հինդուիստական կոնցեպցիայի համաձայն՝ որքան վաղ ժամանակներում տեղի ունեցած դեպքերի մասին են պատմում միֆերը, այնքան նրանք ճշմարտապատում են, քանի որ մարդիկ առավելագույնս մոտ են սկզբնաղբյուրին՝ աստվածային գիտելիքին և զրուցում են աստվածների հետ: Հին հնդկական էպիկական ստեղծագործությունների մի տեսակը՝ **իթիհասան**, թարգմանվում է **«հենց այդպես էլ եղել է»** (Бердников, 1983, с. 236**)**: Այն նաև պատմում է, որ ռեալ իրականությունը գերբնական էակների սխրագործությունների շնորհիվ հասնում է իր վիպական մարմնավորմանը:

Առասպելի հերոսը, որպես սկզբունք, պատումը հյուսող մարդկանց խմբի սովորական, շարքային անդամը չէ. նա կա՛մ ակնառու կարողություններով օժտված մեկն է, կա՛մ հերոսին հակոտնյա մի կերպար, կա՛մ էլ նախահայր՝ տոհմի և ավանդույթների հիմնադիր: Առաջին, անվանադիր նախնու հիմնական գործողությունները հաճախ կապված են տոհմի, ցեղի համար բնական և մշակութային արժեքներ ստեղծելու գործառույթին.նա ավարտին է հասցնում

ազգաստեղծ իր առաքելությունը, ինչպես, օրինակ Հայկ-Օրիոնի դեպքում է: Առասպելական այս առաջնորդների գծերը հետագայում կարող են արտացոլվել արխաիկ էպոսի հերոսի նկարագրում, որը առաջին նախահոր նմանությամբ ներկայանում է որպես մշակութային բարիքներ ստացող մեկը: Նա դրանք կա՛մ ընծա է ստանում աստվածներից (օրինակ՝ Սանասար-զենքուզրահ, Խաչ Պատարագին, Քուռկիկ Ջալալի), կա՛մ առևանգում է դրանք (կարելաֆիննական էպոսի հերոս Վյայնեմեյնենը Սամպոն է առևանգում (Կալեվալա, 1972, էջ 263), հունական Պրոմեթևսը՝ կրակը), վերջապես, նրան բնորոշող գործառույթը երկրագնդի մաքրումն է հրեշներից (Բեովուլֆ, Վահագն): Այլ կերպ ասած՝ արխաիկ էպոսի հերոսը ծագումնաբանությամբ կապվում է նախահոր կերպարին՝ իր մեջ համատեղելով տոտեմական նախնու և մշակութային հերոսի գծերը (Мелетинский, 1977, с. 37): Արխաիկ էպոսի հերոսի գործունեության դրդապատճառները օբյեկտիվորեն համընկնում են ցեղի ընդհանուր շահերին, մի շարք սոցիալական ինստիտուտների կազմակերպմանը, ներդաշնակ աշխարհակարգ ստեղծելու և դիվային ուժերին ճնշելու ցանկությանը: Միևնույն ժամանակ, ցեղը ընկալվում է որպես ամբողջ մարդկությունը, որ հակադրվում է առասպելական դևերին և թշնամաբար տրամադրված օտարներին:

Արխաիկ էպոս

Ե. Մելետինսկու կարծիքով արխաիկ էպոսը սկիզբ է առնում ու ձևավորվում երկիրը վիշապ օձերից, հրեշներից մաքրող հերոսի մասին պատմող առասպելներից և միջցեղային բախումների մասին ավանդազրույցներից (Мелетинский, 1963, сс. 21-94): Այս էպոսն աչքի է ընկնում առաջին հերթին գերբնականի առատությամբ ու գերակայությամբ: Մահեն նշում է, որ «հերոսը, առանց որի էպոսը չէր ստեղծվի, գտնվում է առասպելի և պատմության միջև» (Մահե, Մենագրությունը՝ վստահության ուղեցույց):

Էպիկական ժանրի այս կարգի ստեղծագործություններում, սովորաբար կենտրոնական հերոսը դյուցազնական ուժի ու կրքի կրողն է, իսկ նրա հակառակորդները ինչ-որ սարսափազդու կերպարներ են, դիցաբանական՝ ըստ իրենց տիպի և ծագման: Դրանք սովորաբար հրեշներ են, դև կամ վիշապ (Գիլգամեշ-Խուբաբա՝-

մայրիների պահապանը, Զիգֆրիդ-վիշապ, Սանասար-Համդոլ դև, Տիգրան-Աժի Դահակա, Իլյա Մուրոմեց- Կուռք)։ Շատ դեպքերում և՛ արխաիկ հերոսը, և՛ նրա հակառակորդը սարսափազդու արարածներ են, ֆիզիկական առումով անհավանական չափեր ունեն։ Արխաիկ հերոսի թե՛ տեսքը, թե՛ ֆիզիկական ուժը, թե՛ գերբնական հատկությունները նրա աննորմալության՝ մարդկային կյանքի նորմերին անհամապատասխանության դրսևորումներից են, որտեղ ընդունված չափանիշներից յուրաքանչյուր շեղումի մեջ նկատվում է հիմնադիր նախնու հետ կապը։ Դա բնական է, ըստ Մելետինսկու, առասպելական նախնիները անգամ իրենց պահվածքում հաճախ օրինապահ չէին, քանի որ չկային գրված օրենքներ, դրանք դեռ նոր պիտի ձևավորվեին (Мелетинский, 1976, с. 222)։ Կանոնից դուրս են ոչ միայն **գործելու կերպը**, այլև **արտաքին տեսքը**. այսպես, իրանական Զոհակը (Ֆիրդուսի, 2012) ներկայանում է որպես մի դյուցազուն՝ օձերը ուսերին փաթաթված, ահռելի չափեր ունի «Բիլինաների» Սվյատոգորը, ծովից դուրս եկող Սանասարի տեսքը ահով է լցնում Բաղդասարի սիրտը, դիվային բնույթ ու արտաքին ունի իռլանդական Կուխուլինը, ֆիննական Վիպունենն անճոռնի հսկա է՝ ծանրությունից միշտ անշարժ պառկած։

Նորմայից շեղում է նաև հերոսի **տարիքը**. Կյայնեմեյնենը ծնվում է արդեն ծեր, նարտ Սոսրուկոն հիշում է աշխարհի արարումը, այն ժամանակ նա հասուն տղամարդ էր։ Արխաիկ հերոսի տարբերակիչ գծերից է ոչ թե տարիներով, այլ ժամ առ ժամ մեծանալը, միայնությունը կամ որբությունը. հորից որբ են Սանասարն ու Բաղդասարը, Միերը, Դավիթը, ֆիննական Կյայնեմեյնենը, իրանական Զալը թեև ծնողներ ունի, բայց որբության մեջ է հասակ առնում։ Սասնա ծռերի կամ գերմանական Զիգֆրիդի դեպքում տեսնում ենք հերոսների ժամ առ ժամ մեծանալը։

Արխաիկ հերոսը **ծնունդ է առնում** բնական տարերքի միջամտությամբ, այն է՝ **ջուր, կրակ** կամ **քամ**ի։ Այսպես, իռլանդական Կոնխոբարը ծնվում է ջրից (Կոնխոբարի ծնունդը), Սանասարը՝ նույնպես, թեև որոշ պատումներում մատնանշվում է սրբազան շունչը (Սասնա ծռեր, 1977, էջ 104), Վահագնը՝ կրակից, ֆիննական Կյայնեմեյնենը՝ քամուց։ Արխաիկ հերոսի ծննդի հնագույն դրսևորումը քարից ծնունդն է։ Արմեն Պետրոսյանը նշում է, որ «նարթերի հովիվը կամ մի ուրիշ կերպար, տեսնելով գետափին (կիսա)մերկ

(լողացող) հերոսուհուն, բեղմնավորում է քարը կամ բաց թողնում իր «նետը» նրա ուղղությամբ: Նետի թռիչքն ուղեկցվում է փոթորկով, որոտով, կայծակով և երկրաշարժով: Նետը խոցում է մի քար, որի վրա առաջանում է հերոսի (օս. Սոսլան, ադըղ. Սոսրուկո) սաղմը»(Պետրոսյան, 2018, էջ 310, Нарты, 1957, с. 2): Իսկ «Կոնխոբարի ծնունդը» իռլանդական սագայում Նեսսը հղիանում է ջրից և Կոնխոբարին ծնում գետափի քարի վրա:

Պատահական չէ, որ էպիկական հերոս-նահապետները ժամանակին աստվածացվել են (Հայկ, Աքիլլես, Հերակլես): Խորենացին նրանց մասին խոսելիս օգտագործում է աստվածներ կամ կիսաստվածներ բառերը, որոնց երկրպագության են արժանացրել, նրանց նվիրաբերվել են անգամ համաստեղություններ: Սանասարի ու Բաղդասարի աստվածային ծագումը հանգեցվում է Ծովինարի՝ջրից հղիանալու իրողությանը. «Էլ գործ չունինք էնոնց հետ: Հիմի կը հավտամ, Որ Ծովինար խանում անմեղ է. Էն ազնավուրներ ծովից են» (Սասունցի Դավիթ, 1981, էջ 17):

Ֆիննական էպոսում երգիչ Վյայնեմեյնենի աստվածային ծագումը մատնանշվում է հոր բացակայությամբ և երգվում, թե քամուց է հղիացել մայրը (Կալեվալա, էջ 8): Վահագնը ծնվում է կենսաստեղծ երկու երևույթների՝ երկնքի ու երկրի զուգավորումից: Սակայն, ըստ Վարդումյանի, հերոսների աստվածացումը հենց սկզբում չի ունեցել կրոնական երանգավորում (Вардумян, 1991, с. 87): Այս պարագայում առասպելաբանությունը տարբերվում է կրոնից, քանի որ կրոնը պետական գաղափարախոսության մի ձևն է, իսկ առասպելաբանությունը սկիզբ է առնում մարդկանց գիտակցության ու ենթագիտակցության մեջ բնության ուժերին երկրպագելիս: **Էպոսի գլխավոր հերոսը**, որքան էլ որ գերբնական ծագում ունենա կամ տիրապետի գերբնական կարողությունների, ամեն դեպքում **մարդ** է, որը կարող է միջնորդի դեր ստանձնել մարդկանց և գերբնական արարածների միջև:

Հաճախ է հանդիպում, որ արխաիկ հերոսի ընդհանրացված կերպարի հետևում թաքնված լինեն պատմական անցյալի միանգամից մի քանի գործիչների մասին հիշողություններ: Հերոսի մեջ համատեղվում են այդ պատմական անձերի բնութագրերն ու հատկանիշները, նրանց գործողությունները: Ինչպես նշում է Աբեղյանը. «Գիտենք, պատմական իրողությունները ժողովրդի հիշողության

մեջ երբեմն կցվում են ու միանում իրար, և մի քանի մոտիկ ժամանակներում իրար հաջորդող թագավորների պատմությունից կազմում է մի պատմություն... Այսպես, Տիգրանի և մարաց թագավորի հարաբերությունն անմիջապես Մեծն Տիգրանի և նորա անմիջական հաջորդների՝ մարաց հետ ունեցած հարաբերության պատմության մի ժողովրդական հիշողություն է միայն» (Աբեղյան, էջ 229)։ «Ռոլանդի երգում» Կառլոսի կերպարում արտացոլվել են ոչ միայն Կառլոս Մեծին բնութագրող հատկանիշները, այլև նրա պապի՝ Կառլոս Մարտելի (Неклюдов, Типология и история в памятниках героического эпоса)։

Արխաիկ էպոսի պատումի կենտրոնում տեղադրված է հերոսի և որևէ հրեշի, օձի կամ վիշապի մենամարտը, պատմությունը հյուսվում է դրա շուրջ, աճում, ձևավորվում՝ իր մեջ ներառելով նորանոր մանրամասեր։ «Հաղթանակը օձի դեմ մի ընդգրկուն, իր էությամբ տիեզերածին, առասպել է» (Պետրոսյան, 1997, էջ 29)։ Այս էպիկական հերոսը մի դյուցազուն է, որն ունի աննկարագրելի հզորության ուժ, հասակ, հնարավոր է՝ նաև ախորժակ, որոնք նույնպես նա ժառանգել է իր առասպելական նախնուց։ Արխաիկ հերոսի՝ ուտելու միջոցով մենամարտը տարածված մոտիվ է, էպոսում հերոսի ուժը երբեմն չափում են հենց ախորժակով, օրինակ, «Սասնա ծռեր» էպոսում հովիվն ասում է Բաղդասարին, թե նրա ուժը յոթ անգամ քիչ է Սանասարից (հովիվը 7 անգամ պտտվեց իր հոտի շուրջը մինչև Բաղդասարը կերավ-ավարտեց տաշտի մեջ բրդած հաց ու կաթը (Սասունցի Դավիթ, 1981, էջ 78)։ Նարտական էպոսի հերոսը հսկայի հետ մենամարտում է ոչ թե զենքով, այլ թե ով ավելի շատ կուտի (Нарты, с. 183), «Իլյա Մուրոմեցը և կուռքը» բիլինայում կուռքը Իլյա Մուրոմեցի ուժի մասին տեղեկություն է ուզում ստանալ՝ հարցնելով. «Մե՞ծ բաժին հաց է նա ուտում մեկեն» (Բիլինաներ, 1970, էջ 34)։

Արխաիկ էպոսի հերոսի մեկ ուրիշ ակնհայտ առանձնահատկությունը **անհավասարակշիռ բնավորությունն է**։ Նա շուտ բռնկվող է, բարկացկոտ, նույնիսկ առանց լուրջ պատճառի, ինչպես Բաղդասարի դեպքում է լինում։ «Իլիականում», Պատրոկլեսի մահվան բոթն առնելով, Աքիլլեսը այնպիսի բարկությամբ է մռնչում, որ գլխի շուրջ կրակե մի ամպ է գոյանում։ Այսպիսի բարկությունը կարող է կատաղության փոխվել և հերոսին խելագարության հասցնել։

Օրինակ, իռլանդացիների սագաներում զայրույթի պահին հերոսի գլխից, աչքերից, ձեռքերից կրակ է թափվում: Երբ Կուխուլինը կատաղում է, գլխից արյան շիթեր են վեր բարձրանում կրակի լեզվակների պես, իսկ Օդհինին նվիրված բերսերկները իրենց հասցնում էին ծայրահեղ ագրեսիվ մակարդակի և ցավի նկատմամբ անզգա էին դառնում (Стурлусон, 1995): Հերակլեսին էլ է հատուկ այդ անկառավարելի տևտոնական զայրույթը, այդ պատճառով արքան նրան մայրաքաղաքից միշտ հեռու էր պահում: Ռուս բանագետ Կոսարևը իր «Հերակլեսի ցասումը» գրքում նկատում է, թե հենց որ մարդկային չարացվածությունը տրանսֆորմացիայի է ենթարկվում՝ մթագնելով բանականությունը և վերաճելով տևտոնական զայրույթի, ուրեմն գործ ունենք աստվածային միջամտության հետ (Косарев, 1996, сс. 92-100): Այսպես են պատկերացրել աստված-մարդ ջրբաժանը արխաիկ ժամանակներում:

Դասական կամ հերոսական էպոս

Հերոսական էպոսը կապված է էթնիկ ինքնագիտակցության հետ, որը ձևավորվում է ցեղերի համախմբման և վաղ պետական կազմավորումների ժամանակ, «զարգանում և տարածվում էթնոգենեզի և ցեղերի տեղաշարժման ընթացքում» (Мелетинский,1986, с. 62): Ըստ Նեկլյուդովի՝ «էպոսը դառնում է նրանց կյանքի «մշակութային օրիգինալ արտապատկերումը» (Неклюдов, Типология и история в памятниках героического эпоса): Այս ընթացքում հեղաշրջում է կատարվում մարդկանց պատկերացումներում, այլևս դիցաբանական հատկանիշներով գերբնական արարածների կարիքը չի զգացվում, «առասպելաբանությունը ռացիոնալ ու առավել ներդաշնակ է դառնում» (Лосев, 1982, сс. 369-373):

Հերոսական էպոսը սկիզբ է առնում պատմական երգերից, որոնց մեջ նկատելի են էպիկական պոետիկային հատուկ սկզբունքները: Դրանք պատմում են **իրական անցյալի** կարևոր դրվագների մասին, թեկուզև ժողովրդական երևակայության մեջ վերաձևակերպված: Հին և միջնադարյան գրականության մեջ առաջ է գալիս գրքային էպոսը, որը իր հիմքով սերտ կապի մեջ է և արտացոլում է բանավոր ավանդությունները, բայց գրականության զարգացման ընթացքում ենթարկվում է մշակման («Մահաբհարատա», «Իլիական» և «Ոդիսական», «Ռոլանդի երգը», «Նիբելունգների երգը» և այլն):

Դասական էպոսում պատկերացումները փոխվում են, հերոսը պիտի բարոյական հայացքների ու մոդելի կրողը լինի և այդ պատճառով վաղպետականության շրջանում ձևավորված էպոսը ենթարկվում է պատմականացման: Այսինքն՝ գրեթե բոլոր կերպարները այսպես կամ այնպես մոտենում են իրականությանը: Արխաիկ հերոսի ժամանակն այլևս անցյալում է, նա սպառել է իրեն և ժամանակի ընթացքում մի նոր հերոսի կարիք է զգացվում: **Առաջ է գալիս դասական կամ հերոսական էպոսի ժամանակը:** Այստեղ բնավորությունների մեջ արխաիկ հերոսին բնորոշ վառ գծերը այլևս ցայտուն արտահայտված չեն կամ բացակայում են, հերոսը ոչ թե գերբնական արարածի կերպարով է հանդես գալիս, այլ մարդու, ինչպես, օրինակ, Ոդիսևսը: Դասական էպոսի հերոսն արդեն աստված կամ կիսաստված չէ: Նա մարդ է, որն իր մեջ խտացնում է մարդկային ամենամաքուր ու օրինակելի հատկանիշները, **նա իդեալ է**: Անզուսպ ցասման դրսևորումները ևս նվազում են, նա աստիճանաբար կառավարելի է դառնում, գերակշռում է ողջախոհությունը (օրինակ, Դոբրինյա Նիկիտիչը, որը աչքի էր ընկնում քաղաքավարությամբ ու ճկուն լեզվով): Այդ հերոսի հասակը արդեն ավելի մոտ է մարդու հասակին, անհավանական մեծ ախորժակ այլևս չունի, և շատակերությունը գերմարդկային հատկանիշ չի համարվում, նույնիսկ ծաղրվում է (Բիլինաներ, էջ 35): Նման հերոսին այլևս բնորոշ չէ մոգական անխոցելիությունը, սակայն կարող է ունենալ ինչ-որ միջոց, որը կօգնի դժվար խոցելի լինել (օրինակ՝ պահապան հմայիլ) կամ նա կարող է չափազանց երկարակյաց լինել (Քեռի Թորոս, Ոդիսևս): Դասական էպոսում հակառակորդների կերպարները ևս ենթարկվում են ապամիֆականացման՝ դիվային ծագմամբ հակառակորդների տեղը զբաղեցնում են պատմական թշնամիների ընդհանրացված կերպարները (Неклюдов, Типология и история в памятниках героического эпоса): Էպիկական հակամարտության մեջ հիմնականում արտացոլվում են պատմական իրական դեպքերի վերաբերյալ հիշողությունները (Կուրուկշետրայի 18-օրյա ճակատամարտը «Մահաբհարատայի» 6-րդ մասում՝ Բհագավատգիտայում, Տրոյական պատերազմը «Իլիականում», Ռոնսևալի կիրճի ճակատամարտը «Ռոլանդի երգում», Սասունի ապստամբությունը Խալիֆայության դեմ և այլն):

Միֆի և արխաիկ էպոսի հետ համեմատած՝ դասական էպոսը

ավելի ծավալուն պատում է և ներազդելու մեծ ուժ ունի, այն ազդում է մարդու աշխարհընկալման վրա, արտացոլում բարոյական արժեքների պահանջը, կերտում լավի, վատի, բարու, չարի, հերոսականի, թշվառության մասին հաստատված պատկերացումներ։ Քսենոֆոնը, ընդգծելու համար էպոսի բացառիկ ազդեցությունը երիտասարդների նոր ձևավորվող աշխարհայացքի վրա, իր «Խրախճանք» աշխատության մեջ նշում է. «Հայրս,- ասում է Նիկերատոսը,- հոգ տանելով այն մասին, որ ես լավ մարդ մեծանամ, ինձ ստիպեց, որ սովորեմ Հոմերոսի բոլոր ստեղծագործությունները և հիմա ես «Իլիականն» ու «Ոդիսականը» կարող եմ անգիր ասել»(Քսենոֆոն, Խրախճանք, գլուխ 3։5)։

Այլ աշխարհը՝ գերբնականի աշխարհը, աստիճանաբար սկսում է ընկալվել առավելապես բացասական գունապնակով։ Պրոպպը նշում է, որ գերբնական աշխարհը ներկայացնող կերպարները մեծ մասամբ ձեռք են բերում արդեն թշնամո՛ւ բնութագիր (Проппп, 1955 сс. 33, 41)։ Թշնամին էլ արդեն ոչ թե վախ է առաջացնում իր գերբնական ուժով կամ տեսքով, այլ ծաղր իր հանդեպ (Կոզբադին, կուռք-իդոլիշչե)։

Էպիկական ժամանակաշրջանի և էպոսում կատարվող գործողությունների հերոսական բնույթի մասին նշում են բոլոր հայտնի էպոսագետները։ Ս. Բոուրան գտնում է, որ այս էպոսների առաջացումը կապված է «առնականություն և պատիվ» հասկացությունների հետ, ընդ որում, «հիմնական նպատակը արարքներով ու գործողություններով պատիվ ձեռք բերելն է» (Боура, 2002, с. 10)։ Այդ հերոսականությունը ձևավորվում է այն ժամանակ, երբ ժողովրդի մեջ առաջ է գալիս նոր վերաբերմունք, **առանձին անհատի** ֆիզիկական ու բարոյահոգեբանական հնարավորությունների վերաբերյալ։ Հետևաբար, ծագում է արժեքաբանական ու գեղագիտական նոր պատկերացումների մի համակարգ։

Դասական էպոսի գլխավոր հերոսը իր մեջ կարող է միաժամանակ ամփոփել և՛ արխաիկ հերոսին հատուկ որոշ գծեր, և՛ մարդկային հատկանիշներ՝ միամտություն, բարոյական արժեքներ, սեր, նվիրվածություն։ Այս առումով հատուկ հետաքրքրություն է առաջացնում, թե ի՞նչ տեղ է հատկացվում արխաիկ հերոսին դասական էպոսում։ Այստեղ տեղի է ունենում որոշակի փոխակերպում, ռացիոնալիզացում։ Դասական էպոսում հայտնված արխաիկ հե-

րոսը, որ ահռելի ուժի կրողն է, անընդունակ է ստորության, խորամանկության: Այստեղից էլ պարզամիտ հրեշների կամ միամիտ դյուցազունների կերպարները աշխարհի բոլոր էպոսներում (հունականում՝ Պոլիսթենեսը, գերմանականում՝ Զիգֆրիդը, հայկականում՝ Սանասարը, Դավիթը): Բայցևայնպես հնի ու նորի մասին պատկերացումները բախման մեջ են հայտնվում և արխաիկ հերոսը դասական էպոսում անխուսափելիորեն մեռնում է (Զիգֆրիդ, Աքիլլես, Սանասար, Միեր):

Հերոսական էպոսում հնի ու նորի կոնֆլիկտի մեկ այլ դրսևորում կարող է դիտարկվել տիրակալի և դյուցազնի միջև վեճը (Աքիլլես-Ագամեմնոն, Ռուստամ- Քեյ Քաուս, Սիդ-Ալֆոնս): Այս մոտիվի տարածվածությունը պայմանավորված է հին մտածողության յուրահատկություններով: Տիրակալը և՛ հերոսի կարիքը ունի, և՛ զգուշանում է նրանից: Այլևս տարբերվողը հաճելի չէ, նախանձ է հարուցում, դյուցազնի անկառավարելի ուժը վտանգ է ներկայացնում: Նախանձը կարող է պատճառ դառնալ, որ էպիկական հերոսին փորձեն սպանել, ինչպես օրինակ, մանուկ Դավիթին՝ նետված գուրզը բռնելու պատճառով: «Ռոլանդի երգում» Գանելոնը նախանձում է Ռոլանդին՝դառնալով նրա մահվան պատճառը, «Նիբելունգներում» Զիգֆրիդը շարժում է մյուսների նախանձը իր ուժով, Կրիմհիլդան խանդում է Բրունհիլդին: Այստեղ կարելի է նկատել համամարդկային մի հատկանիշ՝ լավագույնի չընդունումը: Լավագույններին չընդունելու, նախանձելու մոտիվն իր արմատներով ձգվում է դեպի մինչէպիկական ավանդությունները, գերբնականորեն ուժեղ ու օրենք չճանաչող հերոսները, նախահայրերը, երբ ընդգծվում էր անբնական ուժի հանդեպ վախը: Չես ընդունում քեզանից լավին, առաքինություն է համարվում արդեն բոլորի հետ ընդհանրությունը (Гуревич, 1984, с. 215):

Դասական էպոսում հերոսի բնավորության մեջ նկատելի են հայրենասիրական մղումներ, պատրիոտիզմ: Ըստ այդմ՝ երկիրը նվաճողներից պաշտպանելու պաթոսն այստեղ ամենաբարձր արտահայտությունն է ստանում, իսկ հերոսների անունները հաճախ վերծանվում են որպես իսկական պատմական դեմքեր (Սասնա ծռերում՝ Թոռնիկ Մամիկոնյան[1], Հովան, ռուսական բիլինաներում՝

1 Աբեղյանը պատմական զուգահեռներով փորձում է պարզել, որ 11-րդ դարում ապրած ու կռված Թոռնիկ Մամիկոնյանի կերպարը, ըստ Ուռհայեցու, դեռ

Վլադիմիր, սերբերի մոտ՝ Մարկո Կրալևիչ և այլն)։ Նրանք կռվում են յուրայինների համար ու թեև նրանք նաև կարող են յուրայիններին էլ վնաս պատճառել, ինչպես օրինակ Իլյա Մուրոմեցը, որը, երբ իշխանից վիրավորվել էր, Կիևը ավիրեց կամ Ռոլանդը, որ իր հպարտության ու եսակենտրոնության բերումով ամբողջ զորքի կործանման պատճառ դարձավ, Աքիլլեսը, որը ընկերոջ կորստի վշտից հազարավոր կողմնակիցներին դեպի մահ առաջնորդեց, բայց, այնուամենայնիվ, նրանք ընկալվում են որպես յուրային և հայրենասեր, իսկ նրանց էության գերբնական կողմը աստիճանաբար զիջում է մարդկայինին։ Ի դեպ, և՛ Ռոլանդի, և՛ Աքիլլեսի, և՛ Իլյա Մուրոմեցի թշնամիները այլևս հրեշի կերպարանքով չեն հանդես գալիս, դրանք պատմականացված կերպարներ են։ Էպոսի կերպարների այս նկարագրությունից նկատելի է դառնում, որ հերոսների կերպարների էվոլյուցիան շարժվում է դեպի պատմականացում՝ երբեմն-երբեմն արխաիկի վերածնունդով։ Դասական էպոսը վերածվում է մշակութային ստեղծագործության, մի գրքի, որտեղ մարդիկ իրենց տեսնում են հայելու մեջ, քանի որ իրենք անմիջականորեն մասնակիցն են դարձել այդ մշակութային արժեքի ստեղծմանը։

Այսպիսով, կարելի է պնդել, որ էպոսը ամփոփում է ժողովրդի պատմական անցյալը միֆի լեզվով։ Արխաիկ էպոսը սկիզբ է առնում մարդու՝ որպես դիցաբանական պատկերացումներ ընկալվող առասպելներից և հարստանում տոհմատիրական հասարակարգում ապրող մարդու՝ աշխարհակարգի մասին ունեցած պատկերացումներով։ Արխաիկ էպոսի կենտրոնական հերոսը «օտար» աշխարհի կրողն է ու ներկայացուցիչը, նա ընդամենը զարմանքի, հիացմունքի օբյեկտ է և ոչ բնավ ընդօրինակման։ Նրանով կարելի է հիանալ, երկրպագել անգամ, բայց նա դեռ մշակութային հերոս չէ, իդեալ չէ, որին ձգտում են նմանվել։ Դասական էպոսի գլխավոր հերոսը մարդն է, սակայն նա սովորական մարդը չէ, այլ մարդկանցից լավագույնը, մարդկային առաքինությունների կրողը։ Ե՛վ «խառը» տիպի՝ այն է արխաիկի ու հերոսականի բաղադրիչների համադրմամբ («Իլիական», «Ոդիսական»), և՛ հերոսական էպոսները առաջանում-ձևավորվում են հասարակության զարգացման ա՛յն փուլում, երբ էթնոսը, ժողովուրդը արդեն համախմբված է «մենք»

կենդանության օրոք զրույցներով էր պատվել։ Նա ենթադրում է, որ դա Դավիթն է ամենայն հավանականությամբ։ Տե՛ս Ը հատոր, էջ 30։

հասկացության շուրջ, որը հակադրվում է «նրանք»-ին» (Симян, 2016, с.5):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աբեղյան Մ**., Երկեր 8 հատորով, հատոր Ը, Հայկական ՍՍՀ հրատարակչություն, Երևան, 1985, 670 էջ
2. **Հարությունյան Ս**., Բանագիտական անարկներ, Գիտություն հրատ., Երևան, 2010, 264էջ
3. **Հարությունյան Ս**., Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Մուղնի հրատ., Երևան, 2001, 81 էջ
4. **Սասնա ծռեր**, աշխ՝. Ս. Հարությունյանի, Սովետական գրող հրատ., Երևան, 1977, 728 էջ
5. **Սասունցի Դավիթ**. հայ ժողովրդական հերոսավեպ, Լույս հրատ., Երևան, 1981, 367էջ
6. **Սրվանձտյանց Գ**., Մանանա, Ե.Մ. Տնտեսեան տպագրություն, Կ.-Պոլիս, 1876, 471էջ
7. **Պետրոսյան Ա**., Հայկական Սաթենիկը և նրա կովկասյան զուգահեռները // Լրաբեր, N 3, 2018. էջ 311-331
8. Կալեվալա, Հայաստան հրատ., Երևան, 1972, 307 էջ
9. Բիլինաներ, Հայաստան հրատ.,Երևան, 1970, 115 էջ
10. **Ֆիրդուսի**, Շահնամե, Անտարես, Երևան, 2012 , 547էջ
11. **Бабурин А.К.,** Левингтон Г.А. К проблеме «у этнографических истоков фольклорных сюжетов и образов»/ Фольклор и этнография, Л., 1984, 256 с.
12. **Бердников Г.** П., Виппер Ю. Б., История всемирной литературы / Институт мировой литературы имени А. М. Горького, т. 1, М., 1983, с. 286
13. **Боура С.М**., Героическая поэзия. М., НЛО, 2002, 808 с.
14. **Вардумян Г**., Дохристианские культы армян, Ереван, Армянская этнография и фольклор (материалы и исследования), № 18, Ереван, 1991, изд-во АН Армении., с. 60—146
15. **Гуревич А.Я**., Категории средневековой культуры. М., Издательство «Искусство», 1984, с. 350
16. **Дьяконов Н.М**., Архаические мифы Востока и Запада, М., Наука, 1990, 247с.
17. **Косарев В. А.,** Гнев Геракла // Классическая филология на современном этапе.

Сб. научных трудов. М., 1996, с. 92-100.

18. Лосев А.Ф, Знак. Символ. Миф, Изд-во Моск. ун-та, М., 1982. 480 с.

19. Мелетинский Е. М., Эпос и мифы, Мифы народов мира, Издательство «Советская Энциклопедия», т. 2, М., 1980, 1147с.

20. Мелетинский Е.М., Миф и историческая поэтика фольклора / Фольклор. Поэтическая система, Наука, М., 1977, с 23-41

21. Мелетинский Е.М.,Происхождение героического эпоса/ Ранние формы и архаические памятники, ИВЛ, М., 1963, 462 с.

22. Мелетинский Е.М., Поэтика мифа. Наука, М., 1976, 407 с.

23. Мелетинский Е.М., Введение в историческую поэтику эпоса и романа. Наука, М.,1986, 318 с

24. Нарты, Кабардинский эпос, Худ. Лит. М., 1957, 526 с.

25. Пропп В. Я., Русский героический эпос. Государственное издательство художественной литературы, Л., 1955 , 603с.

26. Путилов Б.Н., Героический эпос и действительность, Наука, Л., 1988, 223 с.

27. Симян Т. С., О соотношении мифа, эпоса и романа / Сюжетология и сюжетография, № 1, Новосибирск, 2016, сс 5-21

28. Стурлусон Снорри, Круг земной, Наука, М., 1995, 541 с.

29. Фрай Н., Анатомия критики // Зарубежная эстетика и теория литературы XIX–XX вв. Трактаты, статьи, эссе, Изд. Моск. Унив., М., 1987, с. 232-264

30. Элиаде М., Аспекты мифа, Академический проспект, М., 2010, 256 с.

31. Неклюдов С. Ю., Типология и история в памятниках героического эпоса / Фольклор и фольклористика в СпбГУ, http://folk.spbu.ru/Reader/nekludov.php?rubr=Reader-lectures, (մուտք՝10,05,2022)

32. Քսենոֆոն, Խրախճանք, գլուխ 3:5 http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1348107000 (մուտք՝15,04,2022)

33. ITIHASA: A large-scale corpus for Sanskrit to English translation, https://aclanthology.org/2021.wat-1.22v1.pdf (մուտք՝10,05,2022)

34. Պետրոսյան Ա., Հայկական էպոսի հնագույն ակունքները, Երևան,1997, 48էջ https://www.academia.edu/ 10045806/%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A7%D5%BA%D5%B8%D5%BD% D5%AB_%D5%B0%D5%B6%D5%A1%D5%A3%D5%B8% D6%82%D5%B5%D5%B6_%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82 %D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8._ %D4%B5%D6%80%D5%A5%D6%82%D5%A1%D5%B6_1997._ The_Oldest_Sources_of_the_Armenian_Epic._Yerevan_1997 (մուտք՝02,03,2022)

35. Մահե Ժ. Պ., Մենագրությունը՝ վստահության ուղեցույց, 23/07/2013, ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ https://www.grakantert.am/archives/1761 (մուտք՝10,05,2022)

36. Կոնխոբարի ծնունդը http://www.aquavitae.narod.ru/irelandbiblio/konxobar.htm (մուտք՝10,05,2022)

References

1. Abeghyan M., Yerker 8 hatorov, hator 8 [Studies in 8 volumes, volume 8] Yerevan, 1985 (In Armenian)

2. Harut'yunyan S., Banagitakan aknarkner [Harutyunyan S., Scientific Essays], Yerevan, 2010] (In Armenian)

3. Harut'yunyan S., Hin hayots' havatalik'nery, krony, pashtamunk'n u dits'arany, [Harutyunyan S., Ancient Armenian Beliefs, Religion, Worship and Gods], Yerevan, 2001(In Armenian)

4. Sasna tsrrer, ashkh`. S. Harut'yunyani [Daredevils of Sassoun, work: S. Harutyunyan], Yerevan, 1977(In Armenian)

5. Sasunts'i Davit'. hay zhoghovrdakan herosavep,[Davit from Sassoun: Armenian folk hero novel], Yerevan, 1981(In Armenian)

6. Srvandztyants' G., Manana, [Srvandztyants G., Manana], K. Polis, 1874(In Armenian)

7. Petrosyan A., Haykakan eposi hnaguyn akunk'nery,[Petrosyan A., The ancient origins of the Armenian epic], Yerevan, 1997 (In Armenian)

8. Petrosyan A., Haykakan Sat'eniky yev nra kovkasyan zugaherrnery,[Petrosyan A., Armenian Satenik and Her Caucasian parallels], Lraber, N 3, 2018(In Armenian)

9. Kalevala,[Kalevala], Yerevan, 1972(In Armenian)

10. Bilinaner, [Russian epics], Yerevan, 1970(In Armenian)

11. Firdusi, Shahname, [Ferdowsi, Shahname], Yerevan, 2012(In Armenian)

12. Baburin A.K., Levington G.A., K probleme "u etnograficheskikh istokov fol'klornykh syuzhetov i obrazov"/ Fol'klor i etnografiya [Baburin A.K., Levington G.A., To the problem "at the ethnographic origins of folklore plots and images" / Folklore and ethnography], L.,1984 (In Russian)

13. Berdnikov G. P., Vipper YU. B., Istoriya vsemirnoy literatury / Institut mirovoy literatury imeni A. M. Gor'kogo, [Berdnikov G. P., Vipper Yu. B., History of World Literature / Institute of World Literature named after A. M. Gorky, vol. 1], M., 1983(In Russian)

14. Boura S.M., Geroicheskaya poeziya, [Boura S.M., Heroic poetry] M., New Literary Review, 2002(In Russian)

15. Vardumyan G., Dokhristianskiye kul'ty armyan, [Vardumyan G., Pre-Christian cults of Armenians], Yerevan, 1991(In Russian)

16. Gurevich A.YA., Kategorii srednevekovoy kul'tury,[Gurevich A.Ya., Categories of medieval culture], M., 1984(In Russian)

17. D'yakonov I.M., Arkhaicheskiye mify Vostoka i Zapada, [Dyakonov I.M., Archaic myths of East and West], M., 1990(In Russian)

18. Kosarev V. A., Gnev Gerakla / Klassicheskaya filologiya na sovremennom etape (sopostavleniye mifa o beshenstve Gerakla i boyevogo neistovstva berserkov), [Kosarev V. A., Wrath of Hercules / Classical philology at the present stage (comparison of the myth of Hercules' rabies and the fighting frenzy of berserkers)], M., 1996(In Russian)

19. Losev A.F, Znak. Simvol. Mif, [Losev A.F., Sign. Symbol. Myth] M., 1982(In Russian)

20. Meletinskiy Ye. M., Epos i mify, Mify narodov mira, t. 2,[Meletinsky E. M., Epos and myths, Myths of the peoples of the world, vol. 2] M., 1980(In Russian)

21. Meletinskiy Ye.M., Mif i istoricheskaya poetika fol'klora / Fol'klor. Poeticheskaya sistema, [Meletinsky E.M., Myth and historical poetics of folklore / Folklore. Poetic system] M., 1977(In Russian)

22. Meletinskiy Ye.M.,Proiskhozhdeniye geroicheskogo eposa/ Ranniye formy i arkhaicheskiye pamyatniki[Meletinsky E.M., The origin of the heroic epic / Early forms and archaic monuments],M., 1963(In Russian)

23. Meletinskiy Ye.M., Poetika mifa [Meletinsky E.M., Poetics of myth.] M., 1976(In Russian)

24. Meletinskiy Ye.M., Vvedeniye v istoricheskuyu poetiku eposa i romana [Meletinsky E.M., Introduction to the historical poetics of the epic and the novel] M., 1986(In Russian)

25. Narty, Kabardinskiy epos, [Narts, Kabardian epic] M., 1951(In Russian)

26. Propp V. YA., Russkiy geroicheskiy epos. [Propp V. Ya., Russian heroic epic] L., 1955(In Russian)

27. Putilov B.N., Geroicheskiy epos i deystvitel'nost'[Putilov B.N., Heroic epic and reality] L., 1988 (In Russian)

28. Simyan T. S., O sootnoshenii mifa, eposa i romana/ Syuzhetologiya i syuzhetografiya, № 1[Simyan T. S., On the correlation of myth, epic and novel / Plotology and plotography, No. 1] Novosibirsk, 2016(In Russian)

29. Sturluson Snorri, Krug zemnoy,[Sturluson Snorri, Circle of the Earth] M., 1995(In Russian)

30. Fray N., Anatomiya kritiki // Zarubezhnaya estetika i teoriya literatury XIX–XX vv. Traktaty, stat'i, esse,[Frye N., Anatomy of Criticism // Foreign

Aesthetics and Theory of Literature in the 19th–20th centuries. Treatises, articles, essays] M., 1987(In Russian)

31. Eliade M., Aspekty mifa,[Eliade M., ASPECTS du MYTHE] M., 2010(In Russian)

32. Neklyudov S. YU., Tipologiya i istoriya v pamyatnikakh geroicheskogo eposa, Fol'klor i fol'kloristika v SpbGU,[Neklyudov S. Yu., Typology and history in the monuments of the heroic epic, Folklore and folklore at St. Petersburg State University] http://folk.spbu.ru/Reader/nekludov.php?rubr=Reader-lectures

33. K'senofon, Khrakhchank', glukh 3.5 [Xenophon, Symposium, chapter 3:5] http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1348107000

34. ITIHASA: A large-scale corpus for Sanskrit to English translation, https://aclanthology.org/2021.wat-1.22v1.pdf

35. Mahe ZH. P., Menagrut'yuny` vstahut'yan ughets'uyts',[Mahe J. P., The Monograph: A Guide to Confidence], 23/07/2013 , ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ https://www.grakantert.am/archives/1761

36. Konkhobari tsnundy [The Birth of Conchobar] http://www.aquavitae.narod.ru/irelandbiblio/konxobar.htm

Նաիրա Իսկանդարյան - հետաքրքրությունների հիմնական առարկան էպոսագիտությունն է և համեմատական առասպելաբանությունը: Այս հետաքրքրությունը ներառում է նաև հայկական էպոսի և եվրոպական էպոսների համեմատական քննության հնարավորությունները: Հեղինակ և համահեղինակ է մի շարք հոդվածների **(«**Քառսուն- Ճուղ Ծամ Դեղձունի կերպարի դիցաբանական ակունքների և համաշխարհային առասպելաբանության մեջ նրա զուգորդների շուրջ», «Վիպական Ծովինարի և համաշխարհային առասպելաբանության մեջ նրա զուգորդների ընդհանրության շուրջ», «Ակ ու արեգակ աղջկա խորհրդանիշը «Սասնա ծռեր» էպոսում», «Ներողամտության թեման էպոսում», "INTERPRETATION OF FATE AND GUILT IN ARMENIAN AND EUROPEAN EPICS" - in the journal WISDOM 2022, «Արխաիկ էպոսի հերոսի տիպաբանական նկարագիրը» և այլն**):** Հեղինակի հետաքրքրություններից է նաև կանանց ազատության թեման 20-րդ դարի սկզբի հայ գրականության մեջ («Կնոջ ազատության խնդիրը Շիրվանզադեի երկերում», «Արծաթե երկրի դուստրը», «Պատմական հիշողության խնդիրը Էլիֆ Շաֆաքի աղմկահարույց «Ստամբուլի բիճը» վեպում» և այլն):

ORCID ID 0000-0002-7914-7966

isnaira123456@gmail.com

Наира Искандарян – основной предмет интереса – эпосоведение и сравнительная мифология. Этот интерес включает также область сравнительного изучения армянского эпоса и европейских эпосов. Является автором ряда статей («О мифологических источниках персонажа Карсун -Чух Цам и ее параллелях во всемирной мифологии», «Об образе эпической Цовинар и о ее прообразах в различных мифах мира», «Символ солнца и лучезарной девушки в эпосе «Сасна Црер», «Тема прощения в эпосе», «ТОЛКОВАНИЕ СУДЬБЫ И ВИНЫ В АРМЯНСКОМ И ЕВРОПЕЙСКОМ ЭПОСАХ» - в журнале “Wisdom 2022”, «Типологическое описание геройя архаического эпоса» и др.). Одним из интересов автора является также тема женской свободы в армянской литературе начала XX века («Проблема свободы женщин в произведениях Ширванзаде», «Дочь Серебряной страны», «Проблема исторической памяти в нашумевшем романе Элиф Шафак «Стамбульский подкидыш» и др.).

ORCID ID 0000-0002-7914-7966
isnaira123456@gmail.com

Naira Iskandaryan - The main subject of interest is epic studies and comparative mythology. This interest also includes the field of comparative examination of the Armenian epic and European epics. She is the author of a number of articles (“About the mythological sources of the character of Qarsun-Chugh Tsam and her parallels in the international mythology”, “ A step towards establishing magical Tsovinar’s and her equivalent generalized image in world mythology”. “The symbol of the sun and sun girl in the epic “Sasna Tsrer”, “The theme of forgiveness in the epic”, “INTERPRETATION OF FATE AND GUILT IN ARMENIAN AND EUROPEAN EPICS” - in the journal WISDOM, “Typological description of the hero of the archaic epic” etc.). One of the interests of the author is also the theme of women’s freedom in the Armenian literature of the beginning of the 20th century (“The problem of women’s freedom in the works of Shirvanzadeh”, “Daughter of the Silver Country”, “ The Problem of Historical Memory in the Novel “The Bastard of Istanbul” by Elif Shafak” etc.).

ORCID ID 0000-0002-7914-7966
isnaira123456@gmail.com